# ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖ

## ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ-ԵՈՐՔԻ

### ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԶՕՐԸ ԵՒ ԷՆ ԿԱՐԵՒՈՐԸ

ՀԻՄՆՈՒԱԾ 1843 ԻՆ

ՆԱԽԱԳԱՀ Ռ. Ա. ՄԱՔ ԳԷՕՐՏԻ

| | |
|---|---|
| ԲԱՇԽՈՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ | 1,828,000,000 Ֆրանք. |
| ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ | 6,443,000,000 Ֆրանք. |
| 100 0/0 ԲԱՇԽՈՒԱԾ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ | 541,000,000 Ֆրանք. |

Կարելի չէ բաղդատութեան դնել ուրիշ ո եւ է ընկերութեան պայմանները ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖԻ ընծայած նոյակապ առաւելութիւններուն հետ։ Բացի կեանքի բազմատեսակ ու նոյն իսկ աւելատար ապահովագրական ձեւերէն, այր եւ կնոջ միանգամայն, ինչպէս նաեւ տղոց ու ցմահ եկամուտի վերաբերեալ անմրցելիօրէն նպաստաւոր բոլիսներ կը տրուին։ Որեւէ զուտ փոխադարձ ու համազգային ընկերութիւն, ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖԻ պայմանները ստուգիւ զերիվեր են. վերոգրեալ թուանշանները արդէն շատ պերճախօս են։ Պէտք չէ ապահովագրուիլ առանց քննելու ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖԻ շահաւէտ ու մանաւանդ անխախտօրէն հաստատ պայմանները։

Ընդհանուր Գործակալ Եգիպտոսի, Կիպրոսի եւ Պաղեստինի — ՆԻՔՈԼԱ ԲԻՐՔԻՍ

Փոխ-Ընդհանուր Գործակալ Եգիպտոսի — ՕՀԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

16 Շարա Կալալ, (Թիվֆիքիէ) Մեյխոնեան փարքիկայի կարգը՝ Աւստրիական Հիւպատոսարանի դէմ, Գահիրէ (Եգիպտոս)

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ՝ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ Է։

Շրջականերու համար ջսպատուաւոր եւ ձեռնհաս գործակալներ կը փնտռուին. Դիմել՝ փոխ-Ընդհանուր Գործակալութեան։



# ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՑՅԼԻՆԿԷՐ

Պալաքի փողոց. Խաղնէտարի սփականութիւն, Պրիստօլ Օթէլի ճիշդ դիմաց Դափէ Տը Լա Պուրսի կից

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐՆերն են եւ առոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է։

400 է աւելի վկայականներով եւ մետալներով վարձատրուած, Երաշխաւորեալ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է.

ՀԱՑԹԱՑԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ — ՀԱՑԹԱՑԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ

ՀԱԹԱՑԹԻՉ Ն. Տ. ԽՏԻՎԱՅԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐԻ յանձնանշին։

Գին ՉԱՓԱՒՈՐ

Զրի գասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենաներ համար, յաճախորդաց տուներուն մէջ։

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



# ԾԱՄԻՈՒ ԳԻՐՔԵՐ

—o—

«Արշալոյս»ի խմբագրութեան քով կը գտնուին հետեւեալ ծախու գիրքերը.

1. Զարս տարուան հաւաքածոյ «Արշալոյս»ներու. Գին գահ. ալ 240
2. Յաւերդ Հայրենեաց (թղթակ.) 10
3. Ազգային Սահմանադրութիւն 12
4. Սասուն և Զէյթուն » 10
5. Գող Մժղօ » 8
7. Զաւարճալի անեկդոտներ և ժողովրդական վէպիկներ 5
6. Հիւծախտի դարմանման ամենայաջող միջոցը » 3
8. Ժամբորդութիւն ի Զուիցերիա 3



# ԼՈՒԹՕՂՐԱՖ

Եւրոպային մ' գիմէք. Զեր սիկաբէթի տուփերուն, էթիքէթներուն և այլ լիթօկրաֆի վերաբերեալ ամեն տեսակ գործերուն համար, (բայց սիկարայի թուղթերէ.)

Պ. Ա. Քիրիշճեան, յայտնի վիմագիրը, իր բացարձակ օժանդակութիւնը խոստացած է Ե. Թորոսեան և Ընկերութեան՝ որ վիմագրական գործոց վանազան ճիւղերուն վերաբերեալ ամեն տեսակ և ամեն լիզուէ այցեքարտեր, հարսանեկան հրաւիրագրեր և ծանուցման թուղթեր ևն. ևն. պիտի պատրաստէ յանձնարարութեանց համաձայն։

Գոհացնելու պայմանաւ և դիւրամատչելի։

Դիմել՝ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ.



# ԳՈՒԹՆԱԿԻ ՔԱՐՏԷԶ ԵԳԻՊՏՈՍԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Ռ. ՉԷՔԱՆԵԱՆԷ Ի ԳԱՀԻՐԷ

Այս գեղապայն Քարտէսը կը գտնուի նաև «Արշալոյսի խմբագրութեան քով։



# ԱԶԳԱՊԵՏԵԱՆ ՔՈՅՐԵՐ

Արքլիճ Սեդմիրանի և Գօսինեռու

Շարա Ապտիւլ Ազիզ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց Թիւ 20.

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ



# ԾԱՊԿԱԳՈՐԾ

ԳՐԻԳՈՐ Մ. ԳԱՑՕԼԸԼԵԱՆ

Շարա Մուհամմէտ Ալիի սկիզբը

Խաչատուրեան Եղբարց Դեղարանին մօտ

Երկար տարիներ փորձ վարպետներու քով աշակերտելով, վերջերս ալ շապկագործ հանրածանօթ Տիար Հ. Փափազեանի քով չորս տարիներ աշխատած ու ստացած է արհեստին հմտութիւնը, և սւառածանօթ բոլոր նրբութիւնները։

Այժմ մասնաւոր աշխատանոց մը բացած է Շարա Մուհամմէտ Ալիի սկիզբը և պատրաստ ունի ու մասնաւոր չափի վրայ կը պատրաստէ շապիկներ, անդրավարտիքներ, գիշերնոցներ, շապիկներու օձիքներ (ֆզգոլ) և թեւնոցներ։

Շապիկի նորոգութիւններ ամենամեծ խնամով։

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ.



# ԳՈՂ ՄԺՏՕ

Տասներկու ու կէս ֆորմայէ բաղկացած սոյն հատորը, որ Աղէքսանդրիոյ «Աւրօրա» տպարանին մէջ հրատարակուած է, կը վաճառուի տեղական բոլոր հայ Խմբագրութեանց քով։ Հատորիկը պիտի յաւակնայ հայ որբերու։

Գինն է Երկու ֆրանք.



# ԱԱԽԸՆ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Հիմնուած 1825 ին

| | |
|---|---|
| ԴՐԱՄԱԳԼՈՒԽ | 11,250,000 ՖՐ. |
| ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ | 20,370,000 » |
| ԳԱՆՁՈՒԱԾ ԱՊԱՀՈՎԱԳԻՆ 1901 ԻՆ | 15,940,000 » |

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ, Էխ-լա-Շափէլ (Գերմ.)

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ. Ֆր. Քոեթի

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹ. ԳԱՀԻՐԷԻ. ՕՀԱՆԵԱՆ և ԸՆԿ.

16, Շարա Կալալ (Թէվֆիքիէ) Գահիրէ



# ՄԱՆԿԱԲԱՐՁ

## ՏԻԿԻՆ ՄԱՐԻՑԱ ՓԱՓԱԶԵԱՆ

Եգիպտական կառավարութենէն վկայական ստացած՝ Տիկին Մարիցա Փափազեան կը ծանուցանէ թէ՝ երկար տարիներու փորձառութիւն ստանալէ վերջ, տարիէ մը ի վեր Եգիպտոս հաստատուած է և իր մանկաբարձի արհեստը ի գործ պիտի դնէ։

Իրեն փորձառութենէն օգտուիլ ուզողները, կրնան դիմել Ապտին Շարա Գօսթան Թիւ 29 տունը։

Աղքատաց համար ձրի դարմանում։



# ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

# ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(PAPETERIE CENTRALE)

Նախորդ երկու թիւերով ծանուցուած «Ե. Թորոսեան և Ընկ.» անուան տակ նոր հաստատելի թղթավաճառատունը, իր գործունէութիւնները սաղջիկայ ամսոյ կիսուն պիտի սկսի «Կեդրոնական Թղթավաճառատուն» անունով։

Իր տեղն է Մանսուր բաշա, Թրամվէյի գծին վրայ Նորակառոյց Գաւէծ-էլ-լա-պուրսի շտտոյին մէջ։

Այժմէն կը յայտարարենք մեր յարգելի աղգայնոց թէ՝ նոյն թուականէն սկսեալ մեր նոր սկսած ճիւղին վերաբերեալ ապրանքները փութով և խնամով պիտի կատարուին դիւրամատչելի պայմաններով, առանց ապառիկի։

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ և Ընկ.